ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ՓԱՐԱՎԱՏԱԿԱՆ ԵՒ ՎԱՅԵԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գարսկաստանի համար տարեկան 5 ֆր. և կամ 2 րբլ. 50 կ. թղթդրմ. Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 ֆր., վեցամսեայն 10 ֆրանգ և եռամսեայն 5 ֆրանգ։

Բաժնեգիները կանխիկ կը վճարուին և Տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Է ՏԱՐԻ ԹԻՒ 47

1892 ՅՈՒՆՎԱՐ 30

1892 ՅՈՒՆՎԱՐ 18 (Հ. Տ.)

ՁԱՅԱՔ

Կը հրատարակուի Դշ. և Երք. օրեր

ԳԻՆՔԱՆԴԵՍՆԵՐ

Մրցագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրը։ Յանձնաժողովներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանձնման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՑՏՈՑ ՀԱՅԵՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

==

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Քաղուած կանոնագրէն)

« Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգումներ մտցնելու Թիւրքահայաստանի մէջ, հայ ժողովրդի տեղական պէտքերուն համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրատունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հալածանքները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

« Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ. կաշխատի ներքին այժ գոյացնել Աղդին մէջ իւր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կանենայ իրեն բերան եղող լրագիրը որ, բայց զանազան լուրեր տալէ իրրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարաբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական ուղղը արծարծելու Հայերին մէջ։ (*)

Ծանօթ. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակիցլ կամ թղթակիցլ ուզողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian
(FRANCE) Marseille

(*) «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպատակ Արմենիա լրագրի հրատարակմանը։

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նամակ Թիւրքիահէն (Կ. Պոլիս).—Նամակ Պարսկաստանէն (Թ.հրաս).—կաթողիկոսի ընտրութեան համար. — Քաղաածներ էջմիածնի Սիւնօդի օրագրութիւններէն.— Նամակ Ռումանիահէն (Ռոմաս). — Հայր Ալիշանի առողջութիւնը.—Միջնորդների կարկուտը.— Աւցագիր ի Ռուսաստան.—Պր. Սթամպուլօֆ. — Ծանուցումներ. — Բանասիրական (Ռդեւորութիւն Հայաստանի եւ Պարսկաստանի մէջ)։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԷՆ

Կ. Պոլիս, 11/23 յունվ. 1892

Երկու օր առաջ Գեր. Խորէն Նարպէյ Սրբազան կանչուեցաւ ոստիկանութեան դուռը և վար դրուեցաւ. ապա Եպարքոսի Պալատը տարուելով բանտարկուեցաւ։ Կխմանանք որ օրս ալ զինք իւր տունը տարած են պէչիկմաշ և այնտեղ արգիլած են ոեւէ հաղորդակցութիւն։ Տակաւին չդիտցուիր թէ ի՞նչ է պատճառն այս խըզդարգելութեան. կերեւի թէ մի ծանր խնդիր է դա, զի Նարպէյի պէս արքեպիսկոպոս մը բանտարկելու համար կառավարութիւնը մեծ պատճառներ կունենայ։ Այս խոստութիւնը զարմանք կը պատճառէ ամենեցուն, զի Խորէն եպիսկոպոս վերջերս Սուլթանէն սիրաշահուած մէկը կը նկատուէր և վերջին անգամ Էջմիածնէ վերադարձէն էր յետոյ դրամական պարգեւէ ի զատ, կը խօսուի նաեւ թէ, օրական երկու անգամ կերակուր և ամսական 30 ոսկի կ'ստանար Պալատէն։ Պատրիարքարանն ի՞նչ կրնէ արդեօք այսպիսի պարագայից մէջ. ոչինչ. եթէ պարզ հարցում մ'ալ լինի կառավարութեան այսպիսի ձերբակալութեանց առթիւ, այդ ալ մեծ բան է, զի մեր աշխարհականներէ աւելի այժմ եկեղեցականք պատակաեալ են և իրար չեն քաշեր և այդու հոգերնին իսկ չեն այսպիսի ծանր դէպքեր. անմիտնե՛ր որ չդիտեն թէ վաղը կարգն իրենց կուգայ։ Գալով աշխարհական պաշտօնէից, դոքա երբ այսպիսի ձերբակալութիւն մը լսեն, ա՛լ ծակէ ծակ կը փախչին, ոչ ոքի չեն ուզեր երեւիլ և խօսիլ այսպիսի բաներու վրայ, կարծելով թէ իրենք յեղափոխականներ պիտի են յիւրաքանչիւրն և կառավարութիւնը զիրենք կը լրտեսէ արդէն։ Արդարեւ ծագրելի է այդ հարուստ և բարձրաստիճան հանարուած ազգայնոց դերքը այս պարագայից մէջ մանաւանդ. ո՛ւր են Մեսրոպ 1860–70 թուականներուն ազգային գործիչ հանդիսացող էֆէնտիներու խանդն ու եռանդը և աշխուժութիւնը։

Կարգադրիչ Պր. Ալիքսանը (նախ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ

(Քաղելով թարգմանուած Թան լրագրի 1891 դեկտ. 17 թուի յառելուածէն)

(Շար. 46ղ թուէն)

Շատով դուրս ելնել կուգենք Զիլանա գիւղէն, բայց մեր ճամբան կը մտնէ այս անգամ ալ ախուր հովիտ մը որի մէջէն կատարելապէս տղմուտ, ցեխոտ գետ մը կանցնի խարշուխ անունով. սա Սեւ ծով կը թափի Արտասաէն անցնելով։ Արտասա երկու ապառաժների մէջտեղ չինուած կարեւոր մի վաճառատեղ է. այդ ապառաժներէն մէկի գագաթին վրայ աւերակ մի բերդ կայ Արտասապոլ անունով։ Արտասայի մէջ մեր թուղթեր կը հարցունեն դարմանալ. մեր ունեցած պուլրութիւն կը ցուցնենք, այն տաեն խոնարհաբար ետ կը քաշուին։ Փիչ վերջ մեր ետեւէն սմբակների, զանգակների ձայներ կը լսենք. դա փոստն է որ էրզրում կերթայ. սուրհանդակը իր հետ օտիկաններ առած (թէեւ տաճկաց ալ չատ անգամ չեն դիմանար աւազակների), առջեւէն կը քշէ փոստի պայուսակներն կրող ձիերը, որոնք 6 ժամը մի անգամ կը փոխուին։ Տրապիզոնէն էրզրում փոստի յարաբերութիւնները բաւական կանոնաւոր են. նամակները կը հասնին իրենց հասցէներին, բացի այն պարագայէ երբ կառավարութիւնը միջամտէ և այդ պարագան յաճախ կը ներկայանայ, որովհետեւ թիւրք կառավարութիւնը չատ կասկածոտ է։

Բարավան առջեւ ցեխուտ հեղեղը կամուրջի կամարները տարեր է, այնպէս որ կըստիպուինք մի հունէ անցնիլ. Փարավա մտնելով, մի տունէ կրնանք մի քիչ ջուր ճարել թէեւ գէշ, մի քանի ալ հեռու տեղէ բերուած խնճորներ։ Տաքը սարսափելի է. չուքին մէջ 39 աստիճան կը ցուցնէ ջերմաչափը. աշխարհի ամենէն սոսկալի տեղն սա լինելու է անշուշտ. չորս կողմը կը տեսնուին կրային ժայռեր որոնք արեւի ճառագայթները գոյնզգոյն կը բեկանեն։ Վերջապէս Պէչ-Քիլիսէ գիւղը (հինգ եկեղեցի) կըհասնինք. բայց այդ «հինգ եկեղեցիները» երեւակայական են։ Մեր վրաններ կը հաստատենք մի տան տանիքին վրայ։ Այս կողմ տիրօղ խստասրտութեան եզանակներուն պատճառով, տուներուն հարթ տանիքները ծածկուած կը լինին մէկ մէտր թանձր կաւով, պատի մէջերէն տեղ տեղ փոքր պատուհաններ ալ բացուած են. տան ներսի կողմը մի անշուք բաժանում կը գտնուի առանձին ուր կը պահի ընտանիքը ամրողջ, ձմեռ եղանակին։ Այս կողմեր ո՛չ փայտ և ո՛չ ալ ածուխ գտնուելով, վառելու համար փիթիր կը գործածեն զոր անասունների թրիքով կը շինեն, չաղախելով և նըկանակների ձեւով արեւի տակ չորցնելով։ Կիների գործն է այդ թանկագին վառելիքը պատրաստել. ձմեռին համար պէտք եղածին չափ պաշարը շինելէ ետք, ա՛լ գիւղերին մէջ փիթիրի թուխ բուրգեր կը բարձրանան։

Պէչ-քիլիսէէն մեկնելով, քիչ ճամբայ կառնենք այն օր և Տալպատան կիջեւանինք որպէս զի անկէ Կիւմիւշխանէ երթանք այցելել. այս քաղաք ճանապարհէն 350 մէտր վեր կը գտնուի։ Այգեստաններուն քովէն կանցնինք որոնք մինչեւ 10 քիլոմէտր երկայնութեամբ տարածուած են և իրենց պտուղ չատ հռչակուած է. գետինը յորդած ատեն իր տիղմ կը ձգէ այս այգիներուն մէջ որով զանոնք պարարտաբեր կանէ. աղէկ որ գետը մի պարբերաշրջանով նիւթ կուտայ, ապա թէ ոչ անասնոց աղբը, ինչպէս որ վերը յիշեցինք, վտառաններուն մէջ ծուխի կը վերածուի։ Կիւմիւշխանէի մէջ կը նախա-

կին Մամբրէ վարդապետ) 3 օր առաջ Իսկիւտարի մէջ զարնելու փորձ կը ըլլայ, բայց չյաջողուիր և զարնողն ալ կը ձերբակալուի, կըսեն։ Կարծողներ կան նաեւ թէ չհնուած խաղ մ'էր այդ, խստութիւններ ի գործ դնելու կամ Մամբրէն աւելի սիրցնելու համար կառավարութեան. սակայն համանական չթուիր այդ և կըյայտնուի ճշդութիւնը երբ դատապարտութիւն կրէ այս կամ այն կերպով։

Կաթողիկոսական ընտրութեան առթիւ կառավարութիւնը հարցուցած լինելով Պատրիարքին թէ ի՞նչ պիտի ընէք, գաւառներէն պատգամաւոր պիտի ղրկէ՞ք. Պատրիարքը փոխանակ առթիէն օգուտ քաղելով արտօնութիւն ձեռք բերելու, լսեր է որ միտք ունինք այդպէս ընելու բայց դրամ չունինք. կառավարութիւնն ալ պատասխաներ է թէ քանի որ դրամ չկայ, մի՛ ղրկէք։ Խնդիրը այդպէս մնացած է։ Կըսեն թէ Պատրիարքը Սուլթանէն տեսակցութիւն մը խնդրած է որպէս զի իւր սիրտը ուղղելով, կարենայ հրաման ձեռք բերել որ դժբաղդաբար իր գործին չի գար։

ԱՐՄԷՆ

ԴԱՎԱՌՈՍԻ ԿՈՄԱՏԵՍ
Թիֆլիս, 15/27 մարտ. 91
Գրաբար և լուսաբանական

ՀԱՅ ՀԻՆ ՁԵՌԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ի ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԱՇՏՈՑԻ

Ի ՎԱՆ

Ի ՄՈՒՇ

Ի ԿՊՈԼԻՍ

Ի ՍԵԲԱՍՏԻԱ

Ի ՀՌՈՄԿԼԱ

Ի ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Ի ԱԹԵՈՆՔ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԻԵՆՆԱ

Ի ՊԱՐԻԶ

Ի ԼՈՆԴՈՆ

Ի ՆՅՈՒ-ՅՈՐՔ

Ի ՄԱՍՍԱՉՈՒՍԵՏՍ

Ի ՓԻԼԱԴԵԼՓԻԱ

Ի ՉԻԿԱԳՈ

Ի ՍԱՆ-ՖՐԱՆՍԻՍԿՈ

Ի ՄԵԼԲՈՒՐՆ

Ի ՍԻԴՆԵՅ

Ի ՄԱՆԻԼԱ

Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ

Ի ՊԱՏԱՎԻԱ

Ի ՍԱՄՈՍ

Ի ՍՄԻՐՆԱ

Ի ՀԱՂԹԱՆԴ

Ի ՍԱՐԱՏՈՎ

Ի ՍԱՄԱՐԱ

Ի ՊԱՏԱՐԱՍ

մամատական կացուցանելն է թեմի ընդհանուր ժողովրդի թուին։ Անարդարութիւն է անշուշտ որ օրինակ՝ Երեւանի պէս մի թեմ որը մի քանի հարիւր հազար հայ ժողովուրդ ունի, ունենայ մի պատգամաւոր, նոյնպէս մի պատգամաւոր ունենայ և Տաճկաստանի մի յետ ընկած թեմ (1), որի ժողովուրդը հազիւ մի կամ երկու տանեակ հազարի է հասնում։ Բայց առայժմ պէտք է ցանկալ, անկասկած, տիրող օրէնքի ճշդիւթ դործադրութիւնը, բարեփոխութիւները ըստպահելով ապագային։

ՔԱՂԱՒԱԾՆԵՐ ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

(Աղտատպուհաս Էջմիածնի ԱՐԱՐԱՏ առնագրէն)

(Շար. 46րդ թուէն եւ վերջ)

— 22 Նոյեմ. Երեւանի թեմական փոխանորդ Գեր. Գրիգոր եպս. Գառնակերեանցը յայտարարութեամբ դիմեց Ամենապատիւ Տեղակալին (14 հոկտ. Թ. 330) որի մէջ ասուած է. Երեւանի կոնսիստորիան այս տարուայ Յունվար և Մարտ ամիսներին, համար 11, 172, 211 և 279, դիմելով Սինոդին մի քանի միջէ ստորագրել է իւր անհետաձգելի դրամական դրութիւնը և խնդրել է դրամական միջոց տալ մի դործավար և մի դրագիր աւելացնելու համար։ Մայիսի 10ին Նո. 1791 ստացել է բացասական պատասխան, հիմնուած այն պատճառաբանութեան վրայ, թէ Ջինուորական Տահանների բացումով դործերի և դրագրութիւնների թիւը աւելացել է ոչ միայն Երեւանի այլ և բոլոր Ռուսաստանի Հայոց կոնսիստորիաներում, ուստի հրամայւում է կառավարուել անտրտունջ տահմանուած չտատով, առանց աւելացութեան մի աւելի դործավար կամ դրագիր ունենալու։

Ս. Սինոդը բնաւ ուշադրութեան չէ առել եկեղեցիների, քահանայների, վանքերի, Հոգեւոր կառավարութիւնների, ջինուորակոչութեան ենթարկուողների և վերջապէս հայ բնակիչների համեմատական թիւը Երեւանի թեմում և միւս վիճակներում։ Բոլոր մնացած վիճակներում հազիւ այնչափ հայ բնակիչ կայ, որչափ մի միայն Երեւանի թեմում։ Ատրպատականի, Շամախու և Բեսարաբիայի թեմերում հազիւ 150 եկեղեցիք կան, մինչդեռ Երեւանի թեմում հայ եկեղեցիների թիւը հասնում է 664ի։ Խնդրում է Ամենապատիւ Տեղակալից առաջադրել Սինոդին, յղուցանել Երեւանի կոնսիստորիայի կարիքը, աւելացնելով գոնէ 300 րուբլի ռուս լեզուի վարժ մի դրագրի ռոճիկ։ Տէր Տեղակալը այս յայտարարութիւնը մակադրութեամբ յանձնեց Սինոդին, որ և յարդուեց։

— 22 Նոյեմ. Ալեքսանդրոպոլի երկդասեան եկեղեցական օրիորդաց Աղջութեան դպրոցի հոգաբարձութեան յայտարարութեան համաձայն անօրինեց Սինոդը պահանջել Մեծ. Միքայել Սահակեան գնդապետից Թիֆլիզի կոնսիստորիայի ձեռքով, յիշեալ դպրոցին հասանելիք 15 հազար ռուբլին, որ վերջին չտացուած մնացորդն է երջանկայիշատակ եպիսկ. Ղահրաման Երկայնաբազուկ Աղջութեանցի յիշեալ դպրոցին կտակած 40 հազար ռուբլու։

— 23 Նոյեմ. Ամենապատիւ Տեղակալը հաւատար միւս անդամների Սինոդի ստանում է Թոշակ ամսական միայն 50 րուբլի, մինչդեռ նրա բարձր պաշտօնը անհրաժեշտ ծախքեր է պահանջում. ուստի հրաւայեցին. յաւելուլ Նորին Բարձր Սրբազնութեան տարեկան Թոշակի վրայ այլ եւս 600 րուբլի, մինչեւ նոր Կաթուղիկոսի դալուստը։

— 23 Նոյեմ. Օշական դիւղի կառավարիչ Մելոյակ Երամեանցին տրուում է իրաւունք պահանջելու նոյն դիւղի բնակիչներից նաեւ 1891 թուի ծխահարկն ու այգեհարկը։

— 25 Նոյեմ. Սուրբ Աթոռի Մատենադարանապետ Գերապատիւ Ներսէս Սրբազան եպիսկոպոսը Բարձրադոյն հրամանով արձակուած լինելով բոլոր պաշտօններից, արժան դատուեց մատենադարանապետութեան պաշտօնը յանձնել Մատենադարանապետի օգնականին՝ բարեչնորհ Սահակ արեղայ Ամատունուն։ Այլ և յանձնել Սինոդի անդամ Գեր. Արիստակէս եպիսկոպոս Դաւթեանին ցուցակով բոլոր դրքերը յանձնել նոր կարդուած Մատենադարանապետին և այդ ցուցակի մի օրինակը երկուսի ստորագրութեամբ մատուցանել Սինոդին։ Այլ և կազմել մի առանձին ցուցակ պակասած դրքերի և իրերի։

ՆԱՄԱԿ ՌՈՒՄԱՆԻԱՅԷՆ

Ռոման, 91, դեկ. 31/12 յուն. 92

Հանգուցեալ Վսեմ. Թէոդորոս Սողոմոնեանի մահուան քառասներորդ օրն տեղւոյս Աբժ. Տէր Յակոբեան Մոսկեան Ազատ քահանայիս յատկապէս Ս. Պատարագ մատոյց ի հանդիստ հոգւոյ Նորին։ Ցետ աւարտման եկեղեցւոյն, հանգուցելոյն Աղնուափայլ ընտանիքն, զաւակունքն, թոռունք, ազգական եւ բարեկամք, եկեղեցական պաշտօնեայք և ազգային վարժարանի աշակերտներն ու աշակերտուհիները կառքերով ուղեւորեցան գերեզմանատուն ուր հոգեհանգստեան արարողութիւնը կատարուելէ վերջ, երկու սեռէ աշակերտներն ի մեր գերեզմանի իւրեանց պաշտպան հօր ի ծունր լինալ, ձեռնամած եղերերգեցին հետեւեալը։

Ա՛ռէ՛ք, ընկե՛րք, Մուսայ ձեր,
Որ երբեմն հեշտ հընչէը.
Այժմ տըխուր դիմիկը,
Ողբամք ըզմեր Թէոտոր։
Զոնեմք յետին երգերնիս.
Ոչ եւըս է հետերնիս.
Զուարթունք տանին զայն յարեւ,
Օ՛ն, տանք մեր վերջին բարեւ։
Քո հայրենիք չէր յերկրի,
Դընա՛, հանգի՛ր անդ յերկնի.
Դու Թողուցիր ըզմեզ որը
Եւ մեր բաժին եղաւ ողբ։
Քո բիւր բարեաց փոխարէն,
Պարտիմք արցունք լիօրէն.
Գերեզմանիդ վըրայէն
Վարդ և յասմիկ Թո՛ղ բուրեն։
Հեճուկ, թառաչ և հառաչ
Բաւ չեն չիրմիդ ընդ առաջ.
Բերը որով զիւր հովիւ,
Կորուսանիք ըզքեզ կարօտիւ։
Եղբարք և քորք, օ՛ն փութանք,
Մօտ տապանիս ծունր չդնանք,
Հայցե՛մք սըրտէ ձեռնամած,
Լինել դարման մեր վիրաց։
Տէ՛ր, Քո լուսոյդ Աստուածեան
Աբժանացո՛ մեր պաշտպան.
Ըսփոփէ՛ սրտերըն այրած
Սողոմոնեան ընտանեաց։

Աչակերտելոց առ իւրեանց ամենասիրելի պաշտպան հայրն ունեցած ջերմ համակրանաց այս տխուր և սրտաշարժ տեսարանն անզգայներն անգամ կը փղձկեցնէր ի լաց. այսպէս տխուր տպաւորութեամբ վերադարձան ի տուն հանգուցելոյն. եկեղեցական պաշտօնեայք լիովին վարձատրելէ վերջ, վարժարանի աշակերտաց և աշակերտուհեաց իւրաքանչիւրին բաժնուեցաւ նաեւ հինգական ֆր.։

Այժմ կարեւոր կը համարիմ նաև հրատարակութեան տալ վսեմ. Ասպետ Թէոդորոս Սողոմոնեանի ըրած կտակին, ի մէջ այլոց, մի քանի յօդուածներն զոր քաղած եմ բնագրէն։

Կտակագիր

«Ես, Թէոդորոս Սողոմոնեան, մըտաւորական քալաւոդղ վիճակիս մէջ կը կտակեմ հետեւեալները. և իմ բաղձանքս է որ իմ մահուանէ վերջ իմ հարազատ զաւակս Նիկողայոս կէտառ կէս գործադրէ որպէս զի ինքն եւս իրաւունք ունենայ իւր ընելիք կտակն գործադրել տալու իւր զաւակաց, այր վասն կըստորագրեմ զայս խաղաղ սրտով։

Աստուած օրհնէ իմ բոլոր զաւակունքս, ինչպէս որ եմ իրրեւ հայր կօրհնեմ զիրենք և տայ նոցա երկնային պարգեւս, պահելով զիրենք ընդմիշտ յաչխարհային դառն պատահարից։

1. Ազգային դպրոցին նուիրած եմ 50,000 ֆրանք(1), այն պայմանաւ որ անշարժ կալուած առնուի ի հասոյթ վարժարանիս։

2. Մահուանէս սկսեալ մինչև տասն տարի, տասն աղքատիկ հայ աղայոց դիմէն մինչեւ ոսքը զգեստ չինուի ընտիր կերպասէ, 600 ֆրանքի արժողութեամբ։

3. Դարձեալ կը յատկացնեմ ամեն մէկ տարուան համար 440 ֆրանք, մինչեւ 10 տարի իմ անուան տօնախմբութեան օրս բոլոր աղքատաց բաժնել և թէ գերեզմանիս վրայ հոգեհանգիստ կատարել։

(1) Բացի այս կտակած դումարէն, Ռոմանի Հայոց վարժարանի փառատոր չէնքն ալ ինքը հանգուցեալը շինել տւած է իր կենդանութեան ժամանակ։ ԽՄԲ.

4. Թողած եմ նաեւ 1500 ֆրանք մինչեւ 10 տարի աղքատաց ալիւր բաժնելու համար։

5. Կը կտակեմ թէ իմ անուան տօնախմբութեան օրն տասն և հինգ ողջ կովեր բաշխուին աղքատաց։

6. Նուիրած եմ Ոսկեհատ Մխիթարս որբ աղջկանց ամեն մէկուն 1500ական ֆրանք։

7. Նուիրած եմ Մարիամ Մաքսիմ որբ աղջկան 1500 ֆրանք։

8. Նուիրած եմ Աստուածատուր Թադէոսեանի երկու աղջկանց 2000 ֆրանք։

9. Նուիրած եմ Մարտիրոս Թադէոսեանի երեք աղջկանց 3000 ֆր.։

10. Նուիրած եմ 500 ֆրանք եկեղեցւոյս Աբժ. Տէր Յակոբեան Մոյսեեան Ազատ քահանայիս։

11. Թողած եմ 500 ֆրանք երաժիշտ Պր. Տոնիկ Փանիկին։

12. Նոյնպէս թողած եմ 200 ֆր. լուսարար Պր. Յակոբ Մաթեոսեանին։

13. Վերջապէս թողած եմ նաեւ 100 ֆրանք ժամակոչ Յովհաննէս եղբօր։ (Ստորագրութիւն)

Ահա մի անզուգական բարերար, որոյ մահուանէ վերջ եւս ազգն կը վայելէ նորա բարիքն. ազգային երկու հաստատութիւնք կը կառավարէին ու կը շարունակուին իրենց նախկին բարեկարգութեան մէջ իւր թողուցած անշարժ կալուածներովն. անտէր որբեր ու աղքատներ կը մխիթարուին և չեն դադրիր լիաշուրթն բարեմաղթութիւնները ընել առ Աստուած։

Աւելորդ չեմ համարիր նաեւ հասիչել թէ հանգուցելոյն հարազատ որդի Մեծ. Աղա Նիկողայոս Թ. Սողոմոնեան արդէն սկսած է իւր հոգելոյս հօր կտակն գործադրել. Յինդհանուր Տօնին առթիւ տասն աղքատիկ մանկանց ընտիր կերպասէ եղանակիս համեմատ զգեստներ չինել տալով ու բոլոր խղճալի ընտանեաց ալիւր բաժնելով մխիթարած է զիրենք։

Մահը թէպէտ ամեն մարդու համար նախատահմանեալ անխուսափելի վճիռ մ'է և ամեն ոք ենթակայ է այս վճռոյն. սակայն ունինք եւս յատկեան ապրելու միջոցներ ալ. մեր ազգային ջոջերն եթէ կուզեն որ աշխարհի վրայ իրենց անունը անջնջելի մընայ, թո՛ղ հետեւին հանգուցելոյն չաւղաց ու իրենց ստացուածքին նեբաժին չափ մէկ մասն ալ գործածեն յօդուտ հայրենեաց. ահա այն ատեն ապահով ըլլան որ եթէ մեռնին ալ, պիտի ապրին. ինչպէս կապրի Թէոդորոս Սողոմոնեան։ Թ. փ.

Հ. ԱԼԻՇԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

Ուրախութեամբ կաւետանք մեր ընթերցողների թէ Գեր. Հ. Ղ. Վ. Ալիշան որին էնգլիւէնձայէ բանուելով յանդրագէս հիւանդ պատճած լինելը հրատարակած էինք, իւր բժշկի յայտարարութեան համեմատ անցուցած է արդէն վտանգը և այժմ առողջանալու վիճակին մէջ կը գտնուի. թէեւ դեռ անկողնի մէջ, կրնայ այժմ խօսիլ և պատած է նաեւ գրել։

ՄԻՋՈՐԴՆԵՐԻ ԿԱՐԿՈՒԾԸ

Մարսէյլի մէջ այժմ 14 միջնորդ կը հաշուի զանազան կողմերէ եկած որոնք ամենքն ալ թափուած են Ամերիկա դնացող դեղջուկ հայ գաղթականներուն վրայ, անոնց չոգենաւի տոմսակ առնել տալու համար։

Շաբաթը միջին հաշուով 25–30 գաղթական կանցնի Մարսէյլէն, ուրեմն 2 գաղթականի մէկ միջնորդ կը դանուի պատրաստ և գաղթականներն առիթ չունին դանդատելու թէ պէտք եղածէն չափ միջնորդ չդանուիր պիրենք նաւէն դուրս հանելու, մի օթէլ առաջնորդելու և յետոյ նաւի տոմսակը գնելով ճամբայ հանելու վնաս և դժուարին գործի համար։

Այսպէս երթայ, քիչ առենէն մէկ գաղթականին 2 միջնորդ ալ պիտի հաշուի. միայն թէ գաղթականներն ա՛լ մոռնալու են առայժմ իրենց ընտանեկան պէտքեր և կառավարական տուրքերն և չանալու են այս «առանդոտ» միջնորդներուն անձնուիրութիւնը վարձատրել ամեն բանէ առաջ։

Անցագիր ի Ջուխաստան

Ցոյն կառավարութիւնը որոշած է որ ամէն հաք Ջուխաստան մտնող օտարականներ առանց անցագրի ներս չընդունուին. անցագիրը վաւերացուած լինելու է նաեւ յունական հիւպատոսէ։

ՊՐ. ՍԹԱՄՊՈՒԼՈՑ

Վիէննաէն Տօքթ. Այղելպէրկ կանչուած էր Պր. Սթամպուլօֆի վերքին համար. բժիշկը յունվ. 27ին հասած է և մանակից եղած է բժշկական խորհրդակցութեանը։ Թրնովաէն մի ուրիշ տեղացի ճարտար բժիշկ ալ կանչուած է որ, կըսուի թէ, վերջին ներքո-պուլկար պատերազմին մէջ մեծ ծառայութիւններ մատուցած է։ Գլխատակը տակաւին վերքէն հանուած չէ։ Հիւանդին վիճակը կազդեկնայ հետզհետէ և յոյս կայ որ 15 օրէն ոտքի կենայ։ Վիէննաէն կը հաղորդեն որ երկու անձնաւոր անձինք ինքզինքնին իբր բժշկապետ Պիլրօթի օգնականներ յայտնելով, լուր տարածած էին թէ Պր. Սթամպուլօֆի մեռնելուն լուրը հասած է Տօքթ. Պիլրօթի. սակայն շուտով հերքուեցաւ այդ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԳԻՐՔԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Ամերիկայի *խմբագրատունն իր մօտ ծախու գտնուած գիրքերէն մի վիճակահանութիւն կազմած է որի ամեն թիւերն ալ կը շահին որովհետեւ 1000 տոմսակ է և վիճակահանութեան դրուած են 1000 օրինակ ընտիր գիրքեր, տեղագիներ և պատկերներ գանազան գիներով (Ալիշանի, Րաֆֆիի, Մերենցի, Միսաէլ սարգսեանցի, Դամատ-Քամիի. պատ գործեր, Փարիզ ազգային հրատարակութիւններ և այլն, տարողը 55 տեսակ. 100 ֆրանգ նոցէն մինչեւ 15 անթիմնոց)։*

Վիճակահանութիւնը անպատճառ պիտի կատարուի 1892 ապրիլ 19/1 մայիսի կիրակի օրը, Մարսէյլ, Ամերիկա լրագրի խմբագրատան մէջ։ Նոյն օր իւրաքանչիւր թուի չահածը՝ պիտի հրատարակուի իսկոյն Ամերիկաի մէջ։

Ուզողը ազատ է իւր չահած գրքի փոխարէն ստանալ մի ուրիշ գիրք որ մեր խմբագրատան մէջ ծախու կը գտնուի միեւնոյն գնով. իսկ եթէ իր ուզած գիրքը աւելի մեծ արժէք ունենայ, տարբերութիւնը վճարելով կրնայ ստանալ։ Օրինակ. եթէ մէկը չահած է Րաֆֆիի Ղարաբաղի Աստղագիտը որի գինն է 4 ֆր. 20 անթմ., բայց ինք կուզէ ունենալ Րաֆֆիի Դաւիթ Բէկը որի գինն է 10 ֆրանք, տարբերութիւնն՝ այսինքն 5 ֆր. 80 սանթիմ միայն վճարելով կրնայ ստանալ Դաւիթ Բէկը Ղարաբաղի Աստղագետին փոխանակ։

Իւրաքանչիւր տոմսակի գինն է Մէկ(1) ՖՐԱՆԳ։ Կը ծախուի Մարսէյլ, Ամերիկաի խմբագրատան մէջ։ Մարսէյլէն դուրս ալ կը ղրկուի միեւնոյն գնով, ղրկելու փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով. միայն թէ եթէ 10 հատէն պակաս տոմսակ ուզուի, իբրեւ տպագրուած բան (imprimés) բաց կը ղրկուի փոստով. իսկ 10 հատ կամ աւելի ուզուած ժամանակ, ապահովագրուած նամակով կը ղրկուի։

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Ամերիկաի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ վճարուած՝ գիրք չղրկուիր։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (*Սպառած*)։
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԵԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (*Պուլղար ազգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։*) (1 ֆր. 10 *անթմ.*) 1 ֆր. 50 *սթմ.*
Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(*Հայաստանցիների պանդխտութեան տխուր հետեւանքներն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։*) Գինն (90 *անթմ.*) 1 ֆրանգ 20 *անթմ.*
Զ. ԳԱՄԱՌ ՔԱՖԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց աւարտեալ (*Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են*)։ 50 հատը 2 ֆր. և 50 *սանթիմ*, հատը (5 *անթմ.*) 10 *սանթիմ*։
Է. ԼԻՆԶԻ ՕՐԸՆԴԸ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (*Սպառած*)
Ը. ԹԻՒՐՔԻԱԻ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆՆԵՐ (*Թիւրքիայի Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։*) Գինն 50 *սանթիմ* (35 *սանթիմ*)։
Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ (Ամերիկաի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ շատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են ճուղարարի մէջ որ ութ ծալ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 *սանթիմ*
Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիայի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի մի ջոջերի դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 *սանթիմ*) ,20 *սանթմ.*
ԺԱ. ԹՈՄԱՍ ԲՈՑԱՐԻՍ (Ճունաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Ճոյներն ի՛նչպիսի մեծոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15*սանթիմ*) ,20 *սանթիմ*։

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերէն վրայ մանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովը։

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՑՑ
1892
Նահանջ Թուականին

Սեփականութիւն
Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցին Հայոց

Կ. ՊՕԼԻՍ
Տպագր. Պաղտատլեան

Գինն է, Մարսէյլէն դուրս ղրկելով, 75 *սանթիմ*. Մարսէյլի մէջ 65 *սանթիմ*։

ՕՐԱՑՈՑՑ
1892
ՆԱՀԱՆՋ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Սեփականութիւն Ս. Փրկչի
Ազգային Հիւանդանոցին Հայոց

Տպագր. Պաղտատլեան ի Կ. Պոլիս

Կը ծախուի Ամերիկաի խմբագրատունը, 25 սանթիմ Մարսէյլի մէջ, 30 սանթիմ Մարսէյլէն դուրս, ղրկելու փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Ամերիկաի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին, ի միջի այլոց, և հետեւեալ դիրքերն որոց գիներն նշանակուած են, ղրկելու փոստի ծախքն ալ միասին հաշուելով։

Էլիզէ Ռէքլիւ— Ռուսական Հայաստան կամ Արաքսի աւազանը, Ուրմիա լիճ և Առաջաւոր Ասիա։ Թարգմանեց Միսաէլ Վաղարշապատ 1891։
Գին 1 ֆրանք

Քաջունի Հ. Մ. — Աչխարհագրութիւն հին և նոր Հայաստանեայց
2 ֆրանք 50 *սանթիմ*

Աբել Արքեպիսկոպոս Մխիթարեանց— Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնագրութեամբ. Վաղարշապատ 1874.
,70 *սանթիմ*

Եզնիկ քահանայ Երզնկեանց—Դասագիրք հայկական ձայնադրութեան Հայոց դպրոցների համար. Բ տպագրութիւն. 2 ֆրանք 10 *սանթիմ*։

Վ. Փափազեանց—Խոթ-Մաբա (Հայ բոշաների կեանքից) ,35 *սանթիմ*

Վ. Փափազեանց — Ճգնաւոր Եղօ (Թիւրքահայերի կեանքից) ,35 *սնթմ.*

Շիրվանզատե — Գործակատարի յիշատակարանից (Մի պատկեր վաճառականական կեանքից) և Հրդեհ Նաւթագործարանում (Բազուի մշակների կեանքից) 1 ֆրանք։

Գաբրիէլ Եպ. Այվազեան—Աբեւն ուժ մոլորակները (Լաբան կենցաղօգուտ գիտելեաց) ,35 *սանթիմ*։

Նոյն—Եգիպտոսի հնութիւնները ,35 *սանթիմ*։

Նոյն—Մեծն Ներսէս Հայրապետ 35 *սանթիմ*։

Մանկունի—Այրի վանք կամ Դեպազայ վանք ,35 *սանթիմ*։

Վարդուկեան— Դալլալիկ (Գրաբար ոտանաւորներ՝ արարչագործութեան հրաշալիքներին վրայ) ,75 *սնթմ.*

Եզնիկ քահանայ Երզնկեանց—Ապագային երգարան ձայնադրեալ հայկական ձայնանիշներով։ 2 ֆր. 80 *սնթմ.*։

Ջայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի—Բ տիպ. Էջմիածին 10 ֆր.։

Բազդատական աշխարհագրութիւն. Ասիոյ, Ափրիկէի, Ամերիկայի և Աւստրալիայի բնական, տոհմական և քաղաքական նկարագրութիւնը.
1 ֆրանք 75 *սանթիմ*։

Վ. Փափազեանց—Պատկերներթիւրքահայերի կեանքից (Հեղինակին 11 հատ ամենաընտիր վէպիկները).
4 ֆրանք։

Ասկայմէ զատ, Ամերիկաի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին նաեւ Հ. Ալիշանի, Հ. Ինճիճեանի, Հ. Դարեգին Զարբհանէլեանի, Րաֆֆիի, Մերենցի հրատարակուած բոլոր գիրքերն, ինչպէս և ուրիշ օգտակար գիրքեր և քարտէզներ Հայաստանի՝ Հայերէն կամ լատինական տառերով և զանազան գիներով և.ն. և.ն.։

Դրամաճառանոցի մանրադամս յայտը որ 90 երեսներէ կը բաղկանայ, յանկացողներին կը ղրկուի ձրիապես։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.
ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի Marseille. — Imprimerie du Midi et Papeterie Allées de Meilhan, 44.